

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, մեծարգո հյուրեր, այսօր հիրավի պատմական օր է Անկախ Հայոց Պետության և ողջ հայ ժողովրդի համար, որովհետև Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի ընտրությունը, ես կարծում եմ, խորհրդանշական ընտրություն է, համազգային ընտրություն, Աստվածային ընտրություն: Այսօր տոն է, ազգային ցնծություն, և ես ուզում եմ մեր ողջ ժողովրդի անունից, Վեհափառ Տեր, Ձեզ ցանկանալ երկար, բեղմնավոր, եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեություն, Ձեզ մաղթել քաջառողջություն, արևշատություն: Այս գեղեցիկ առիթով ես ունեմ կատարելու մի չափազանց հաճելի պարտականություն, Ձեզ, Վեհափառ Տեր, շնորհելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և հանձնելու Հայաստանի Հանրապետության անձնագիրը: Եվս մեկ պարտականություն. ես ուզում եմ մեր ժողովրդի անունից խորին շնորհակալություն հայտնել նաև Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին, որը յոթ ամիս գլխավորեց մեր Եկեղեցին, կազմակերպեց Ազգային-Եկեղեցական Ժողովը և հասցրեց ահա այսպիսի Աստվածային ընտրության: Նույն առիթով Պատրիարք Սրբազանին շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կարգավիճակ:

ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ն. Ս. ՇԸՆՈՒԴԱ Գ-Ի ԽՈՍՔԸ

Որպես Ղպտի Եկեղեցու Կաթողիկոս և Պապ, ես ի սրտե շնորհավորում եմ Ընտրյալ Կաթողիկոս Գարեգին Առաջինին, ում գահակալությանը ներկա եղանք այս օրերին և համատեղ աղոթեցինք: Կաթողիկոս Գարեգին Սարգսյանը նվիրված հոգևորական է: Ես նրա հետ առաջին անգամ

գամ ծանոթացա, երբ ինքը ղեկավարում էր Միջին Արևելքի Աստվածաբանական վարժարանները: Ես նրան ճանաչեցի նաև որպես Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի նախագահներից մեկը: Նա գիտական կարողություններով օժտված անձ է և լավ ղեկավար: Այս բացառիկ առիթով ես նրան նվիրում եմ գավազան:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, հոգևոր հայրեր և շատ պատվական հայ ժողովուրդ. ինձ համար բացառիկ ուրախություն է այս պահին յուրահատուկ առիթով ներկա գտնվել ձեր կողքին: Սուրբ Երրորդության անունը՝ Հայր Աստված, Որդի Սուրբ Աստված և Հոգի Սուրբ Աստված, թող փառավորյալ լինի այս փառավոր առիթով: Մաղթելով Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսին քաջառողջություն, անսասան հովվություն և անսպառ սեր առ հարազատ ժողովուրդը՝ ես Նորին Սուրբ Օծությանը նվիրում եմ մի խաչ:

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԱԲՈՒՆԱ ՊԱՈՒԼՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս,
Ազգային-Եկեղեցական Ժողովի հարգարժան անդամներ,
Թանկագին եղբայրներ,

Ուրախության խոր զգացումով է, որ շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ձեր գահակալության առթիվ, ինչպես նաև մեր հայկական քույր Եկեղեցուն: Ես երջանիկ եմ բերելու Ձեզ ջերմագին, եղբայրական ողջույններ համայն Եթովպիայի 40 միլիոն ժողովրդի և մեր պատմական Թեոդահեդո Ուղղափառ Եկեղեցու անունից: Մենք անչափ ուրախ ենք, որ գտնվում ենք Հայաստանում, մի երկիր՝ հին քաղաքակրթությամբ և հպարտ ժողովրդով, որտեղ Նոյան տապանը 7-րդ ամսին, 17-րդ օրը, նստեց Արարատ լեռան վրա (Ծննդոց Թ 4):

Այս պատմական և փառաշուք առիթով ես մեծ ուրախությամբ ուզում եմ կանգ առնել այն բարեկամության և եղբայրական կապի վրա, որ գոյություն է ունեցել մեր երկու քույր Եկեղեցիների միջև տարբեր դարերում: Այդ բարեկամությունը եղել է ոչ միայն կրոնական գետնի վրա: Պատմական փաստերը վկայում են, որ շատ հայեր ապրել ու աշխատել են Եթովպիայում՝ վայելելով մեր ժողովրդի սերն ու հարգանքը դեռևս 150 տարի առաջ, երբ գահակալում էր Մենելիք Բ կայսրը: Հակառակ որոշ կրոնական հալածանքներին, հայերն ազատորեն մասնակցել են մեր երկրի հասարակական գործերին և ներգրավվել արվեստի և առևտրի մեջ: Նրանք նկատելի ներդրում են կատարել երկրի գեղարվեստական և տնտեսական գործերում՝ ոմանք նույնիսկ անձնական բարձր մակարդակով: Հայերի և եթովպացիների միջև եղած բարեկամությունն այնքան սերտ ու մտերմիկ է եղել, որ փոխադարձ սեր և հարգանք է զարգացել նրանց միջև:

Ձերդ Սրբություն, քանի որ Ձեզ է վստահվել այս սրբազան և բարձր դիրքն այսօր, մենք զգում ենք, որ ծանր պատասխանատվություն է ընկնում Ձեզ վրա: Մենք այն համոզումն ունենք, սակայն, որ Դուք Ձեր կա-

Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս Ն. Ս. Մորան Մար Բասիլիոս Մար Թոմա Բ-ն իր խոսքն արտասանելիս

Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ն. Ս. Աբունա Պաւլոսը իր խոսքն արտասանելիս

ղությամբ և իմաստությամբ, Ձեր հեռատեսությամբ, ոգևորությամբ և խելամտությամբ հաջողության կհասնեք: Մենք աղոթում ենք մեր Փրկիչ և Տեր Հիսուս Քրիստոսին, որ Ձեզ ուժ ու տոկունություն տա և իր անսահման իմաստությամբ առաջնորդի Ձեզ՝ ի կատար ածելու Ձեր սուրբ պարտականությունները: Այս դեպքում ես կուզենայի վստահեցնել Ձեզ, որ մենք կանգնած ենք Ձեր կողքին և պատրաստ ենք համագործակցել Հայ Եկեղեցու հետ մեր ընդհանուր նպատակների իրականացման համար՝ առաջ մղելով մեր ուղղափառ առաքելությունը և սերմանելով Տիրոջ խոսքը: Այսպես վարվելով, կարծում եմ, հարմար և վայելուչ կլինի, որ մենք հետևենք մեր Եկեղեցու սուրբ հայրերի անձնական օրինակին: Նրանք, իսկապես, ցուցաբերեցին անխախտ հավատարմություն դեպի հավատը, առաքինություն և նկարագրի ամրություն: Մենք մեր ամբողջ կորովով և գործերով ջանք պիտի թափենք հանուն խաղաղության: Եկեղեցին ինքը պիտի լինի խաղաղության պատվար: Խաղաղությունը պետք է իշխի քույր Եկեղեցիների միջև: Եկեղեցիների պետերը առաջնահերթ պարտականություն ունեն փոխադարձ հասկացողություն, համաձայնություն և խաղաղություն հաստատելու Եկեղեցիների միջև: Մենք մեծ ցավով և անձկությամբ ենք նշում, որ Քրիստոսի թշնամիները բազմաթիվ են և աղմկարար: Նրանք հարձակվում են քրիստոնեության, մարդասիրական իդեալների, արժեքների և քաղաքակրթության վրա, որոնք մեծ դժվարությամբ ստեղծվել են 2000 տարիների ընթացքում:

Որպեսզի այսօր Եկեղեցիներն ու նրանց առաջնորդները հասնեն համագործակցության և ցանկալի միության, կարիք ունեն խորհրդակցության և երկխոսությունների վերակենդանացման, ինչպիսին տեղի ունեցավ 1960 թ. ոչ-քաղկեդոնական Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև: Ես կարծում եմ, որ մենք, իբրև Եկեղեցու պետեր, չպետք է գայթակղվենք իշխելասիրությամբ և մրցակցությամբ, չպետք է հրապուրվենք գոռոզամտության անպատշաճ զգացումներով: Ընդհակառակը, մեզ պետք է առաջնորդեն համեստությունն ու համերաշխության ոգին:

Ճշմարիտ հարգանքն ու հոգատարությունը միմյանց նկատմամբ, ներկապակցվածությունը ու ուժը պիտի օգնեն մեզ՝ զորացնելու միությունը Եկեղեցիների միջև: Ոգեշնչված ավետարանական խոսքերով, որ «Աստված սեր է... եթե Աստված այնքան սիրեց մեզ, մենք նույնպես պարտավոր ենք սիրել միմյանց» (Ա Հովհ. Դ 8—11):

Եվ, վերջապես, ես ցանկանում եմ մի անգամ ևս հայտնել մեր ուրախությունը նոր Հայաստանի անկախության առթիվ, Հայ Եկեղեցու համերաշխության առթիվ և Մեր եղբայր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ի գահակալության առթիվ:

Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին մաղթում եմ մեծագույն հաջողություններ, քաջառողջություն և երջանկություն:

Թող մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսը օրհնի այս ազգին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանը, և Սուրբ Հոգու շնորհը մնա բոլորիս հետ, ամեն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ՕՐԹՈԴՈՔՍ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴԱՄԱՍԿԻՆՈՆԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն, իբրև ներկայացուցիչ Տիեզերական Պատրիարք Բարդողիմեոսի և իր Աթոռի ու Սուրբ Սինոդի, հուզումով ու յուրահատուկ հրճվանքով եմ մասնակցում Հայ Եկեղեցու Հովվապետի գահակալության շքեղ արարողություններին, որով Եկեղեցու հիմնադիրն ու տերն իր առաջնորդներով լուսավորում է Հայ Եկեղեցին և աշխարհով մեկ ափռված հայ ազգը, քանզի այսպիսի քահանայապետ էր մեզ պետք, նմանօրինակ Քրիստոսի, թրծված իր ժողովրդի պայքարում, վկայված Քրիստոսի Ավետարանի ծառայության մեջ: Նորին Սրբությունը, ուղղափառության մեծ հայրերին հաղորդակից լինելով և ժամանակակից աշխարհում ուղղափառ հավատքի վկայության պայքարով, ցույց է տվել իր փայլուն դեմքն իբրև օրինակ աստվածաբան Հայրապետի, որ միացնում է Աստվածաբանությունը զոհասեղանին՝ Եկեղեցու մարմնի շինության համար: Կոստանդնուպոլսի Մայր Եկեղեցին գնահատում է Հայ Եկեղեցու եպիսկոպոսական դասի ոգեկան հաղթանակը և առաքելական ծառայության շարունակականությունը: Հայ Եկեղեցին դարեր շարունակ մասնակից եղավ աշխարհում ուղղափառության վկայության ընդհանուր պայքարին: Մեր երկրում օրթոդոքս և ուղղափառ Եկեղեցիների միջև պաշտոնական աստվածաբանական երկխոսության հարուստ պտուղները ցույց տվեցին մեր ընդհանուր հաստատակամությունը հավատքի առաքելական ուղղափառության հանդեպ և առաջնորդում են մեզ դեպի ընդհանուր բաժակ, ուր և մեր ուրախությունը կատարյալ կլինի: Զերդ Սրբություն, շուրջ երեսուն տարի հետևում եմ Զեր փայլուն աստվածաբանական վաստակին և Զեր եկեղեցական ծառայության շրջահայեցությանն իբրև ուղղափառ և համանախագահ մեր Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության խառն հանձնաժողովի, անհրաժեշտություն եմ զգում գոհունակություն հայտնել Զեր անձնական նպաստի համար այդ գործում, Զեր աստվածաբանական հաստատակամությանը, որի շնորհիվ մեր բարի գործերի միջոցով փառաբանվում է Սուրբ Երրորդությունը և սպասարկվում ժամանակակից մարդը: Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու այս պատմական և բարձրագույն Աթոռից շարունակ դեպի մոտիկներ և հեռուներ պիտի ճառագայթի հոգեկան ուժը ուղղափառ հավատքի, որպեսզի հովվեք Զեր բարեպաշտ ժողովրդին և վկայեք ուղղափառությունն աշխարհում:

Նորին Սրբություն Տ. Տ. Բարդողիմեոսը իմ միջոցով մատուցում է Զերդ Սրբությանը հովվապետական ծառայության և իշխանության խորհրդանիշները՝ պանակեն և հայրապետական գավազանը, և մաղթում երկար հովվապետություն: Երկար տարիներ Զեզ, Վեհափառ Հայրապետ:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍԻԴԻԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ինձ համար մեծ և բացառիկ պատիվ է ներկայացնել Սրբազան Պապին Զեր գահակալության այսօրը: Ես Զեզ եմ փոխանցում Նորին Սրբազնության բարեմաղթանքները: Մենք շատ մի-

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ միտրոպոլիտ Դամասկինոսը

Պետական Հայրենական Սիմֆոնիկ նվագախումբ

Վեհափառ Հայրապետին ընդունում է Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու
ներկայացուցիչ կարդինալ Կասիդին

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ եպիսկոպոս Ջոն Դենիսը

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու
ներկայացուցիչ միտրոպոլիտ Ֆիլարետը

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Հունաստանի Ուղղափառ Եկեղեցու միտրոպոլիտ Խրիսոստոմոսը

Վեհափառ Հայրապետին օնորհավորում է Վրաց Ուղղափառ Եկեղեցու
ներկայացուցիչ Դանիել արքեպիսկոպոսը

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Նիֆոն եպիսկոպոսը

թարված ենք զգում Ձեր գահակալությամբ և Ձեր ընտրությամբ, որովհետև անցյալում մենք համատեղ գործակցել ենք եկեղեցական զանազան մակարդակներում: Նորին Սուրբ Օծություն, Դուք պիտի առաջնորդեք Հայաստանյայց Եկեղեցին աշխարհի չորս ծագերում: Մենք աշխարհի զանազան քաղաքներում կողք-կողքի ունենք Կաթոլիկ և Հայաստանյայց Եկեղեցիներ: Միասին համագործակցել ենք և պետք է շարունակենք միմյանց օգտակար լինել՝ որպես վկաներ և առաքյալներ Քրիստոսի Սուրբ Ավետարանի: Նորին Սուրբ Օծություն, վստահեցնում ենք, որ Կաթոլիկ Եկեղեցին այսուհետ ևս համագործակցելու է ձեզ հետ՝ հաստատելու համար քրիստոնյա Եկեղեցու միությունը: Մենք աղոթում ենք, որպեսզի Ամենակալն Աստված Ձեզ և Ձեր բոլոր հոգևորականներին շնորհի Իր օրհնությունները, նաև Ձեզ ենք փոխանցում Նորին Սրբազնություն Պապի գերագույն աղոթքներն ու մտահոգությունները, ինչպես նաև գործակցությունը ձեզ և Ձեզ հետ: Ես Ձեզ արդեն փոխանցեցի Նորին Սրբազնության գրավոր պատգամը (Կարդինալ Կասիդին, ի գիտություն ընթերցողների, Պապի գրավոր նամակը հանձնեց Վեհափառին և նաև մի խաչ նվիրել էր նախորդ օրը Վեհափառի գրասենյակում (Տես աստ. էջ 95):

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԱԼԵՔՍԵՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՆՍԿԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՖԻԼԱՐԵՏԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, թույլ տվեք փոխանցել Ձեզ Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Երկրորդի ողջույնի խոսքերը: Այս ուղերձով հղում եմ Ձեզ ջերմ սիրո և եղբայրության խոսքեր, որ Հայ Եկեղեցու հանդեպ տածում է Ռուս Ուղղափառ Եկեղեցին: Ինչպես Ձեր Նախորդի՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Կաթողիկոսի ժամանակ, այնպես էլ Ձեր գահակալության շրջանին ռուս Եկեղեցին հավատում է, որ մենք քույր Եկեղեցիներ ենք, և մեր բարեկամությունը պիտի թևածի Արարատի կատարներում: Ռուս Եկեղեցին և նրա Պատրիարքը սպասում են Ձեր այցելությանը Ուղղափառ Եկեղեցի: Ընդունեցեք այս պանակեն և խաչը, որոնք կզարդարեն Ձեր կաթողիկոսական կուրծքը: Երկար-երկար տարիներ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Թույլ տվեք փոխանցել Ձեզ Համայն Վրաստանի Պատրիարք և Կաթողիկոս Իլիա Երկրորդի շնորհավորանքները: Ձերդ Սուրբ Օծություն, ի Քրիստոս եղբայր, սրտի անհուն ուրախությամբ իմացանք Ձեր ընտրության մասին որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք: Խոսելով մեր երկու Եկեղեցիների փոխհարաբերության մասին, ուզում եմ ասել, որ մեր նախորդները շատ լուսավոր էջեր են գրել մեր երկու Եկեղեցիների և ժողովուրդների միջև: Հանուն վրաց ժողովրդի, հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու, Ձերդ Սուրբ Օծություն, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր գահակալության տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երկար տարիների կյանք, բարեհաջող աշխատանքներ և հայ ժողովրդին՝ բարգավաճում: Եղբայրական սիրով ի Քրիստոս Իլիա Երկրորդ Կաթողի-

կոս Համայն Վրաստանի: Ձերդ Սուրբ Օծություն, խնդրում եմ ընդունեք այս նվերը Համայն Վրաց Կաթողիկոս Իլիա Երկրորդից: Վրացական Կառավարության անունից Ձեզ արքանկար կհանձնի Վրաց խորհրդարանի խոսնակ պարոն Վախթանգ Գոգուաձեն:

ՎԱԽԹԱՆԳ ԳՈԳՈՒԱՁԵ

Թույլ տվեք, հանուն վրաց կառավարության, Էդուարդ Շևարդնաձեի և խորհրդարանի անունից Ձեզ նվիրել այս արքանկարը՝ ցանկանալով Ձեզ հաջողություն և մեր ժողովուրդներին՝ հաղթանակ:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԻԱ ՍՈԲՀԱՆԻԻ ԽՈՍՔԸ

Ես, որպես Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչ, Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության, կառավարության և Իրանի ժողովրդի կողմից իմ արտագին շնորհավորանքներն եմ ուղղում հայ ժողովրդին, Հայաստանի Պետությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինին Վեհափառի ընտրության առթիվ: Շատ ուրախ եմ, որ հաջողվեց մեզ ներկա գտնվել այսօրվա այսքան հոգեպարար և տպավորիչ կրոնական արարողություններին, մասնավորաբար այսօրվա արարողությունները, որոնք խիստ տպավորիչ և հոգեպարար էին: Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ նայում է Հայաստանի Հանրապետությանը որպես բարեկամի և լավ հարևան երկրի: Դա արտացոլվում է Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության և պատասխանատուների բոլոր արտահայտություններում, ովքեր ցանկանում և բարեմաղթում են, որ Հայաստանի Հանրապետությունը բարգավաճի ու զարգանա օրավուր: Մենք երբեք չենք զլացել որևէ համագործակցության ծրագրեր կազմել այս ասպարեզներում: Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ նկատի է առնում այն կարևոր կետը, որ Աստվածային կրոնների մեջ եղած կամրջող և իրար միացնող գաղափարներն ու տեսակետները շատ ավելին են, քան կրոնն իրարից զատող և զանազանող դրվածքները և տեսակետները: Հետևաբար այն կարծիքին է, թե պետք է քայլեր կատարել աստվածային մեծ կրոններին հետևող ժողովուրդների միության համար: Մեր երկրում Ձեր կրոնակից հայ հայրենակիցներն իրենց մուսուլման եղբայրների կողքին ապրում են երջանիկ և բարվոք կյանքով, մասնակցում երկրի նվաճումներին, օգտվում բոլոր իրավունքներից: Իրանահայությունը իր կարևոր և ազդեցիկ դերն է ունեցել Իրանի իսլամական հեղափոխության հաջողության գործում: Հետագա տարիներին ևս իր դերը միշտ դրական և փայլուն է եղել բոլոր ասպարեզներում: Ես տեղին եմ համարում կրկին անգամ, նաև իրանահայության կողմից, հատուկ շնորհավորանքներ հղել Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Վեհափառի ընտրության առթիվ և շնորհավորել նրան որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Իհարկե, գրավոր պատգամով մեր երկրի Իսլամական Հանրապետության հարգարժան նախագահի շնորհավորանքի պատգամը կտրվի Վեհափառին: Շնորհակալություն:



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Վրաստանի խորհրդարանի նախագահ Վախթանգ Գոգուաձեն



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է ՍԴՀՄ Տաճկահայոց Կաթողիկոսարանում աճուրդից հրաշալի դուրս գալուն առիթով

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԹԵՈԿՏԻՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԻՖՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու կողմից շնորհավորում եմ Նորին Սուրբ Օծությանը և այդ առթիվ նվիրում մի սրբապատկեր, ուր պատկերված են Կոստանդինն ու իր նահատակված զավակները:

ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱԹԱՆԱՍԻՈՍ ԵՓՐԵՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հայաստանի Հանրապետության նախագահ մեծարգո Լևոն Տեր-Պետրոսյան, գերաշնորհ սրբազան հայրեր և հարգելի հյուրեր ու ներկաներ, նախ և առաջ փոխանցում եմ Ձեզ Նորին Սրբություն Տ. Տ. Իգնատիոս Զաքա Երկրորդ Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու ողջույնները: Անտիոքի, Մերձավոր Արևելքի, Սիրիայի Եկեղեցու Հոգևոր Գերագույն Խորհրդի և համայն Սիրիայի ժողովրդի անունով, բոլորս աղոթելով Աստծուն, ցանկանում ենք նորընտիր Կաթողիկոսին հաջողություն իր հոգևոր առաքելության մեջ, խնդրում ենք Հիսուս Քրիստոսից, որ իր կոնքեռը լցնի աստվածային շնորհներով, ինչպես նաև նույն հավատքով ու դավանությամբ միմյանց կապված մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ և քույր Եկեղեցուն և համայն ժողովրդին, ի Հայաստան և ի ամենայն աշխարհի, կմաղթենք հառաջադիմություն բոլոր մակարդակների վրա: Մի զարմացեք, սիրելի ներկաներ, որ Սիրիայի մի եպիսկոպոս ձեր գեղեցիկ լեզվով խոսում է ձեզ հետ, որովհետև մորս մեծ հայրը հայ է եղել, և մայրս, որ այսօր իննսուն տարեկան է, միշտ հետս հայերեն է խոսում: Առավել հավատքի միության մեջ միացնում է հողը և ազգականությունը, որովհետև միասին ապրեցինք և միասին չարչարվեցինք: Ահավասիկ ձեզ հետ հայերեն եմ խոսում, բայց Սիրիայի գրերով, նույն գրերը, որ ձեր նախահայրերը գործածեցին մոտավորապես 400 տարի, մինչև որ Սուրբ Հայրերը՝ Մեսրոպ և Դանիել, արարեցին Այբբենգիմը, որ հիմա գործածում ենք: Վերջացնելով մեր խոսքը, կմաղթեմ ձեր բոլորին հաջողություն, հառաջադիմություն և Աստուծո օրհնությունը և նորընտիր Կաթողիկոսի մաղթանքները, աղոթքները և խնդրանքները մեր բոլորի հետ լինեն. ամեն:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. ԳԵՐԾ. ՍԵՐԱՖԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԽՐԻՍՏՈՒՍՏՈՄՈՒՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, Հունաստանի արքեպիսկոպոս Սերաֆիմը և Հունաստանի Սուրբ Սինոդը սիրով ընդունեց Ձեր հրավերը՝ մասնակցելու Հայ Եկեղեցու Կաթողիկոսի գահակալությանը: Սա ոչ միայն պաշտոնական, այլև արտագին ներկայություն է, սա Հունաստանի հոգևորականության իրական մասնակցությունն է այս պատմական պահին Հայ Եկեղեցու համար: Մեր Եկեղեցու ներկայությունն այստեղ իրական է, որովհետև մեկ

անգամ ևս հաստատվում է երկու Եկեղեցիների միատեղ և համատեղ հավատքի առկայությունը: Մեր երկու Եկեղեցիները, բաժանումից հետո, ունեցան իրենց ճանապարհները, սակայն նրանք միշտ փորձեցին միասին վերամիավորվել: Մեր երկու Եկեղեցիների հոգևորականներն ամենուր, ուր որ գտնվել են օտար աշխարհներում, միշտ համագործակցել են միմյանց հետ, որպեսզի կարողանան համատեղ լուծել այն խնդիրները, որոնք առաջացել են օտար երկրների մեջ: Աստվածաբանորեն և պատմականորեն լինելով բաժանված միմյանցից, այդ խնդիրները սակայն չխանգարեցին մեր երկու Եկեղեցիների հոգևորականներին, որպեսզի նրանք կարողանան սիրով ու ջերմությամբ գործակցել միմյանց հետ: Հունաստանի Եկեղեցու ներկայությունն այստեղ ոչ թե ձևական է, այլ իրական: Ինչպես գիտեք, մեր երկու Եկեղեցիների հոգևորականների համար ընդհանուր դաշտ են եղել Սնծովյան ափերը և երկու Եկեղեցիներն էլ գործել են այնտեղ: Այնտեղ նաև համատեղ արտահայտվել են երկու Եկեղեցիների թե՛ ուրախությունները, թե՛ տխրությունները, որն արտահայտվեց նրանով, որ այդ երկրամասում միասին ապրել են ինչպես հունական, այնպես էլ հայկական Եկեղեցիների զավակները: Ցավով եմ հիշում Մեծ եղեռնը, երբ նահատակվեց հայ ժողովուրդը, մի ժողովուրդ, որի նահատակությանը, սակայն, ոչ մի արձագանք չտրվեց Արևմտյան պետությունների կողմից: 1915 թվականի Մեծ եղեռնը հետագայում եղավ նախօրինակը հունական ցեղասպանության Փոքր Ասիայում: Արևմուտքի այս լռությունը պատճառ դարձավ, որպեսզի վերանա քրիստոնեությունը Փոքր Ասիայում, և այժմ մենք այս երկրամասում գտնվում ենք դժվարին պայմաններում: Այն ընդհանուր ճանապարհը, որ ունեցել են մեր երկու ժողովուրդները և Եկեղեցիները, մեզ պարտավորեցնում է, որպեսզի մենք այսօր կարողանանք միացնել մեր ուժերը՝ երկու Եկեղեցիների և ժողովուրդների համար: Այս իրականությունն ավելի շոշափելի կլինի երկու Եկեղեցիների միացումով, որը կարող է կատարվել շնորհիվ աստվածաբանական երկխոսության, որ կատարվում է վերջին տարիների ընթացքում մեր երկու Եկեղեցիների կողմից: Իբրև վառ օրինակ մեր Եկեղեցիների բարեկամության, Հունաստանի Եկեղեցին մատուցում է Ձեզ պանակե, որն արտահայտությունն է Աստվածամոր տանջանքի: Այն ցավը, որ զգաց Քրիստոսի մայրը, շարունակվում է նաև Հայ Եկեղեցում: Հետևաբար պանակեի հետ միասին մատուցում ենք Ձեզ նաև մի խաչ, որը խորհրդանշում է ոչ միայն Քրիստոսի, այլև Հայ Եկեղեցու չարչարանքը հատկապես այսօր, անկախ Հայաստանի վերահաստատմամբ, երբ Եկեղեցու առջև բացվում են նոր հորիզոններ: Հունաստանի Եկեղեցու և հույն ժողովրդի կողմից շնորհավորում ենք Ձեզ և մաղթում երկար տարիներ:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. ԳԵՐԹ. ՋՈՐՋ ԿԱՐԵՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉ ՋՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԵՆԻՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ես խոսում եմ հանուն Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և Ձեզ եմ բերում իր բարեմաղթանքները: Ձեր և մեր Եկեղեցիները երկար տարիների բարեկամական կապեր ունեն: Մեզանից յուրաքանչյուրի համար Եկեղեցին սեփական ազգն է, ուստի մասնավորաբար շեշտում ենք մեր ժողովրդի հոգևոր կյանքը՝ նրան առաջնորդելով ի Քրիս-

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Հայ Կաթոլիկ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Ն. Ս. Հովհաննես-Պետրոս ԺԸ-ն

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Հայ Ավետարանական Եկեղեցու վերադասվելի Հովհաննես Գարջյանը

տոս: Մեզանից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ սի սփյուռք: Նորին Սուրբ Օծություն, ինչպես մյուս հոգևորականները, այնպես էլ Դուք Ձեր աստվածաբանական ուսումն ստացել եք Անգլիայում: Մենք Ձեզ նկատում ենք մեր մտերիմ բարեկամը: Հուսանք, որ Դուք էլ մեզ կնկատեք Ձեր բարեկամը: Մինչ Դուք թե՛ Ձեր և թե՛ Ձեր ազգի կյանքում կբացեք Ձեր եկեղեցու նոր էջը, մենք Ձեզ խոստանում ենք մեր սիրտը, մեր աղոթքը: Հուսանք, որ մի օր, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, կայցելեք Անգլիայի Քենթրբերիի Արքեպիսկոպոսին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ՋԵՐԵՄԱՅԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի անունից շնորհավորում ենք Ձերդ Սուրբ Օծությանը, ցանկանում կրկին անգամ հիշեցնել, որ այսօր Ծաղկազարդ է, և Քրիստոս հենց Ծաղկազարդին հաղթականորեն մուտք գործեց Երուսաղեմ: Դուք նույնպես այսօր հաղթականորեն եք սկսում Ձեր առաքելությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց ներս: Ինչպես Քրիստոս, Դուք էլ շարունակեք ծառայել Հայաստանյայց Եկեղեցուն՝ խաչվեք և սակայն հարություն առեք Քրիստոսով: Ես անձամբ ներկայացնում եմ Եվրոպայի բոլոր Եկեղեցիները՝ լինեն նրանք բողոքական, կաթոլիկ կամ անգլիկան: Հետևաբար նաև Ձեզ եմ փոխանցում նրանց բարեմաղթանքներն ու շնորհավորանքի ջերմ խոսքերը:

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Առաջին Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց, հոգևոր եղբայրներ, ազգային պատգամավորներ, հարգելի հյուրեր և բարեկամներ, յոթ ամիս առաջ քայլերս ուղղեցի դեպի Սուրբ Էջմիածին՝ մեր թանկագին բարեկամի անշնչացած մարմինը հողին հանձնելու, մասնակցելու երջանկահիշատակ Վազգեն Առաջինի հուղարկավորությանը, մի Հայրապետ, որ շուրջ քառասուն տարի դժվարագույն պայմաններում կարողացավ հովվել իր ժողովրդին՝ հարազատ ազգի կողմից անմահ անուն ժառանգելով: Յոթ ամիս հետո քայլերս ահա դարձյալ ուղղում եմ դեպի Սուրբ Էջմիածին, բայց այս անգամ խնդակցելու վաղեմի բարեկամիս հետ, մասնակցելու Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության հանդիսավոր արարողություններին՝ իմ եպիսկոպոսների, կղերի և հայ կաթողիկե համայնքի անունից: Ձեր այս բարձրացումը, Վեհափառ Տեր, ստիպում է երկու ծանր հանձնարարությունների տակ դնել Ձեզ, որոնք կամենում եմ արտահայտել երկու մաղթանքի ձևով. առաջին մաղթանք՝ Ձեր կաթողիկոսության շրջանին Հայոց Եկեղեցին թող դարմանի իր սպիները, Հայոց Եկեղեցին վերականգնի իր միությունը, լինի մի՝ իշխանությամբ, մի՝ հոգիների արտակցությամբ, ինչպես որ մի է դավանանքով: Երկրորդ մաղթանք՝ Աստված, որ Իր անքննին խորհրդով Ձեզ Սփյուռքի հայերից ընտրելով, բազմեցրեց Էջմիածնի Սուրբ Աթոռին, կամեցավ Ձեզ դարձնել հոգևոր

կամուրջ հայրենիքի և Սփյուռքի մարդկանց միջև: Եղեք միասնականության պայծառ ծիածանը, որպեսզի միմյանց կամարեք հայության զույգ թևերը, որոնք մրրկավ էին բաժանված: Վեհափառ Տեր, անցյալի դժվար հոլովույթների պատճառով ամեն կաթողիկոս թե՛ հայրապետություն էր և թե՛ պետություն հայ ազգի համար: Հայաստանի ներկա անկախացումով և հայկենի պետության հրաշափառ վերականգնումով Դուք պիտի կարողանաք Ձեր ուսերից վար առնել պետության և Ձեր ակամա պաշտոնը ու լի ու լի ստանձնել հայրապետական առաքելությունը՝ հարազատ ժողովրդի հոգում վերակենդանացնելու համար մեր հայրերի սուրբ հավատքը, որի կարիքն այնքան զգում է նա: Վեհափառ Տեր, Ձեր հայրապետությանն է վիճակվելու 2001 թվականին տոնախմբել հայոց դարձի 1700-ամյակը: Այս անկրկնելի ու վսեմաշուք տարեդարձն արժանավորապես տոնելը ինչպիսի՜ պատիվ, միանգամայն ի՜նչ դժվարին հանձնառություն է Ձեր կողմից, քանզի Ձեզ են ուղղված լինելու աշխարհի միլիոնավոր մարդկանց աչքերը: Կարիքը պիտի ունենաք թե՛ Աստուծո, թե՛ ազգի և Հայաստանյայց Եկեղեցու ամբողջական աջակցության: Ընդունեցեք նաև մեր համեստ մասնակցությունն այս ընդհանուր համաշարժին: Ձեր գահակալության սրբազան առիթով մի անգամ ևս նորոգում ենք մեր տրամադրելիությունը՝ գործակցելու Ձեզ հետ, ինչպես որ ուխտել ենք պահպանել մեր հայրերի պետության անքակտելի համատեղությունը բոլոր ժամանակներում և ամենուր: Վեհափառ Տեր, անցյալ օրը, սիրալիր տեսակցության ընթացքում, մեր համեստ նվերը՝ մատանին, արդեն ընծայեցինք Ձեզ:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԿՎԱՌԻՍ ՇՎԱՐՑԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ես Ձեզ բերել եմ Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու օրհնություններն ու շնորհավորանքները: Գերմանիայում մենք քաջատեղյակ ենք Ձեր ժողովրդի դժվարին ու ծանր պայմաններին: Միայն Հովհաննես Լեփսիուսը չէր, Ֆրանց Վերֆել ևս մեզ ներկայացրեց Ձեր ժողովրդի ապրելակերպի դժվար պայմանները: Ունենալով այդ գիտակցությունը, բողոքեցինք նաև այսօրվա թրքական կառավարության մոտ՝ նկատի ունենալով, որ թրքահայ պատգամավորները չկարողացան ներկա գտնվել այս կարևոր և շատ մեծ ժողովին՝ չբերելով իրենց մասնակցությունը: Մենք գիտենք Ձեր ժողովրդի բոլոր տանջանքները, ծանոթ ենք այդ ժողովրդին, բայց անհրաժեշտ է նայել նաև ապագային: Եկեք միասին նայենք դեպի հայ ժողովրդի ապագային և բարեկարգությանը: Մեր ցանկությունն է Ձեզ օգնել այս բարեկարգության պահին: Մեր ամենամեծ ցանկությունն է շարունակել 1988 թվականի երկրաշարժից հետո կատարած օգնությունը: Մենք ցանկանում ենք ոչ միայն նյութապես օգնել, այլև գիտությամբ: Երկու շաբաթ առաջ արդեն երեք ուսանող Մայր Աթոռից մեկնեցին Գերմանիա՝ Աստվածաբանական ուսում ստանալու համար: Մենք ցանկանում ենք, որ այս կապերն է՛լ ավելի զորանան, և Դուք Գերմանիա ուսանելու ուղարկեք նաև ճեմարանի ուրիշ սաներ, ովքեր մեզ մոտ Աստվածաբանական գիտություն կստանան և կվերադառնան Մայր Աթոռ: Մենք ցանկանում ենք, որ Սուրբ Հոգու օրհնությունները լինեն Ձեր մշտական ուղեկիցներն այսօրվա դժվարին ճանապարհներում: Աստված թող օգնի

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Գերմանական Ավետարանական Եկեղեցու անունից Գրառուս Շվարցը

Վեհափառ Հայրապետին շնորհավորում է ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ դոկտ. Վեզլի Արիառաժան

Ձեր առաքելությանը: Մենք աղոթում ենք Ձեր և Ձեր ժողովրդի բարօրության համար:

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՐՋՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ինձ համար մեծ պատիվ եմ նկատում մեր համայնքի և Եկեղեցիների բարեմաղթությունները փոխանցել Ձեզ՝ այս նոր դաշտում ղեկավարություն ստանձնելու առիթով: Մեր ճամփաները զուգահեռաբար են ընթացել: Տարիների ընթացքում մենք միասին ենք քայլել եկեղեցական, կրթական, ազգային ձեռնարկների մեջ և տարբեր մակարդակներով: Մեզ համար պատիվ է եղել Ձեզ հետ համագործակցելը, Ձեր հովանավորությունն ու աջակցությունը վայելելը: Հիմա այս առիթով եք սկսում Ձեր գործակցությունը հայրենի հողի վրա, ուր Ձեր ծառայությունը պիտի մատուցեք համայն հայությանը: Հուսով ենք, որ դարձյալ մեր Եկեղեցիները ինչպես Սփյուռքում, այնպես էլ այստեղ՝ հայրենիքում, միասին պիտի քայլեն, հետևաբար Ձեզ կմաղթեմ զորություն, իմաստություն, Աստուծո շնորհքը և բարի երթ, Վեհափառ Տեր:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵԹՐ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, հանուն Կիլիկիո Սուրբ Աթոռի, անոր կենտրոնական վարչության և զանազան մարմիններուն, թույլ տվեք, որ հայտնենք մեր ուրախությունը, մեր սիրտերու ցնծությունը Ձեր այս նոր ասպարեզի, Հայաստանի ժողովուրդի և Հայաստանյայց Եկեղեցվո այս նոր հանգրվանի համար: Վեհափառ Տեր, մենք այդ երջանիկ մարդիկն ենք, որ 14 տարի տևական օր մը, այո, օր մը վերջ, ոչ գիշեր կամ ցերեկ, վայելեցինք Ձեր հոգածությունը, վայելեցինք Ձեր ներկայությունը և այսօր ուրախ ենք և քիչ մըն ալ տխուր, որ կբաժնվինք, բայց կընծայենք Ձեր անբիծ կենցաղը, Ձեր ոգու անհուն առաքինությունները, կընծայենք, որ մատաղ ըլլան Հայաստանի և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցիին: Վեհափառ Տեր, Դուք շատ բան լսեցիք, մենք միայն պիտի մաղթենք, որ Էջմիածնի Սուրբ Աթոռը Ձեր օրոք տեսնե նորանոր նվաճումներ, նոր Հայաստանի նվիրյալ ժողովուրդը վերստին գտնե այն բոլոր արժանիքները, որ կուգան քրիստոնեական հավատքեն: Մենք վստահ ենք, Վեհափառ Տեր, որ Ձեր ներկայությամբ նաև ձեռք-ձեռքի տված մեր Հայաստան ազատ, անկախ Հանրապետության և անոր նախագահին, անոր կառավարության անդամներուն և ընդհանրապես մեր հայ ժողովուրդին ձեռք-ձեռքի տված Դուք նոր ոսկե էջ պիտի բանաք մեր Եկեղեցվո, մեր ազգին, որպեսզի մնանք մեկ ժողովուրդ, մեկ ազգ և մեկ հայրենիք Ձեր և բոլորի հոգածությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Հանրապետության հարգելի նախագահ, սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս և հարազատ արյունակից հայրենակիցներ,

Բնականորեն ես իմ պաշտոնական խոսքն այսօր Սուրբ բեմեն կարդացի, փոխանցեցի իմ ժողովրդին՝ ուխտս կատարելու վայրկյանեն անմիջապես ետք: Այստեղ մենք հավաքված ենք և այս սեղանը ես կկոչեմ սիրո ճաշ՝ ագապե: Ինչպես քրիստոնյաները կընեին ժամանակին, երբ որ պատարագ կընեին, պատարագեն ետք կերակուրը կբերեին և միասնաբար կբաշխեին: Ատոր անունն է ագապե: Այսօր այդ սիրո ճաշի շուրջը մենք արտակցեցանք խոսքով, խոսակցությամբ, ձեռքները սեղմելով, իրարու աչքերի մեջ նայելով և մեր միությունը, ամբողջականությունը այս պահուն մեջ անգամ մը ևս վերանորոգելով: Իմ խորին շնորհակալությունը անգամ մը ևս կհայտնեմ մեր սիրելի պարոն նախագահին՝ իր ներկայությանը համար այստեղ: Ես քաջ գիտեմ, թե որքան ծանր պարտավորության տակ կգտնըվի, թե ինչքան զբաղումներ կպահեն զինքը իր գրասենյակին մեջ, որ այսքան ժամ տրամադրեց, ես կնկատեմ անիկա սիրո զեղում մը մեր Եկեղեցիի, Սուրբ Էջմածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության և մեր ժողովուրդի հանդեպ:

Սիրելիներ, ես այսօր պաշտոնական խոսք չպիտի ըսեմ, բայց մեկ բան պիտի ըսեմ: Շատ խոսեցանք, կբավե, լծվինք գործի: Փողոցներում խոսվեցավ, թերթերուն մեջ գրվեցավ, տուներուն մեջ խոսվեցավ, շուկաներուն մեջ խոսվեցավ, խոսվեցավ: Հիմա օն, հառաջ, դեպի գործ: Եվ այս գործին մեջեն միայն մեկ սկզբունք պետք է ընդունինք այսօր: Թող ատիկա ըլլա իմ նվերը ձեզի և ատիկա թող ըլլա ձեր նվերը ինձի: Ես կյանքիս մեջ մեկ սկզբունք մը այնպես առողջ գտած եմ, որ կյանքիս մյուս բոլոր սկզբունքները անով անուցված են: Զատորոշենք ընդհանրականը մասնավորեն, էականը՝ երկրորդականեն, ճղճիմ-ճղճիմ, պստիկ-պստիկ բաներով մեր կյանքը չթունավորենք: Հորիզոն ունենալ, տեսիլք ունենալ, գաղափար ունենալ և հանձնառություն, նվիրում, զոհողություն: Խոսքը գնում է, ցորենն է մնում՝ մեկ խոսքով ստվերը կերթա, լույսը կմնա: Ես կուզեմ, որ մենք իբրև ազգ այլևս վարժվենք ճղճիմ-ճղճիմ, մանրուք հարցերով այնպես չապառել մեր ուժերը, որոնց պետք ունինք մենք ստեղծագործորեն նոր բաներ ստեղծելու համար և մեր հայրերու ժառանգը ճոխացնելու համար մեր ժողովուրդը: Աշխատանքը սուրբ է և սրբաբար, Աստուծո անեծքը գահ և սիրելի բարեկամներ Հայաստանի պետության կառավարության մեջ, իմ քարոզս ամեն տեղ, կյանքիս հետ միասին պիտի ըլլա գործի լծելմար: Այս է իմ խոսքը այս երեկոյին: Հետևաբար, հարգելի պարոն նախաօրհնություն է: Աստված մարդը անիծեց, ըսավ՝ ճակտիդ քրտինքով պիտի ուտես քու հացդ, և ատիկա եղավ մարդուն օրհնություն: Մի կտոր հաց առվի ափին իշխանական ճաշ է ինձի, երբ հոգիով քու շահածդ է, քու քրտինքդ կա ատոր մեջ: Մենք աշխատանքի պետք ունինք, գործի պետք ունինք, ուրեմն վերջ խոսքին չեմ ըսեր, թե բոլորովին՝ պիտի խոսինք անպայման ,բայց նվազում խոսքի և առատացում գործի, տեղատվություն խոսքի՝ մակընթացություն գործի. այս թող ըլլա մեր այսօրվա նշանաբանը:

Շնորհակալական խոսք է ասում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը

Վեհափառ Հայրապետը Մայր Եկեղեցիների հովվապետերի եւ ներկայացուցիչների հետ